ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 23 նոյեմբերի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 51-Ա/Ք

**ՕԼԵԳ ՆԻԿՈԼԱՅԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 12-րդ կետերը և հաշվի առնելով Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի «Կառավարման համակարգեր» ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օլեգ Նիկոլայի Գասպարյանի՝ արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումներն ու ակնառու նվաճումները, ինչպես նաև՝ գիտական կադրերի պատրաստման գործում ունեցած մեծ ավանդը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Օլեգ Նիկոլայի Գասպարյանին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հիմնադրման 85-ամյակի առթիվ շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի Ոսկե մեդալ:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ